



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, Դեկտեմբեր 17-ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին պիտի հանդիսապետէ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Յաւարտ Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի նախագահէ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի հանդէսին, որ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյս «Աւետիսեան» սրահին մէջ:

PRELATE TO PRESIDE OVER HOLY MASS AND SUNDAY SCHOOL CELEBRATION AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, December 17, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

Following Mass, the Prelate will preside over the Sunday School Christmas celebration that is scheduled to begin at 1:00 p.m.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Հ.Յ.Դ. ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Կիրակի, Դեկտեմբեր 17-ին, Հ.Յ.Դ. Օրուան տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Glendale High School-ի հանդիսասրահին մէջ, երեկոյեան ժամը 6-ին:

Առաջնորդ Սրբազան Հայրն ու Ազգային Վարչութեան անդամներ ներկայ պիտի ըլլան սոյն հանդիսութեան:

PRELATE TO ATTEND ARF ANNIVERSARY CELEBRATION

On Sunday, December 17, the 116th anniversary of the A.R.F. will be celebrated at Glendale High School, starting at 6:00 p.m.

The Prelate and Executive Council representatives will attend the event.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱԶԱՆՆ ՈՒ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 15-ԱՄԵԱԿԻ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Հայաստանի Անկախութեան 15-ամեակին առիթով եւ Լոս Անճելըսի մօտ Հայաստանի նոր նշանակեալ Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Արմէն Լիլոյեանի ի պատիւ, ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Դեկտեմբեր 18-ի երեկոյեան ժամը 7-ին: Ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ Le Meridien Beverly Hills պանդոկին մէջ, Լոս Անճելըս:

Առաջնորդ Սրբազանը, Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան անդամներ, ընդառաջելով իրենց ուղղուած պաշտօնական հրաւերներուն, ներկայ պիտի ըլլան ընդունելութեան:

**PRELATE TO ATTEND RECEPTION ORGANIZED BY THE
CONSULATE GENERAL OF ARMENIA**

The Consulate General of Armenia in Los Angeles has organized a reception on the joint occasions of the 15th anniversary of the independence of the Republic of Armenia and the recent appointment of Mr. Armen Liloyan as Consul General in Los Angeles. The reception will take place on Monday, December 18, at 7:00 p.m., at Le Meridien Beverly Hills Hotel in Los Angeles.

The Prelate, accompanied by Clergy and Executive Council members, will be in attendance.

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, Դեկտեմբեր 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ երիտասարդական խմբակին կողմէ կազմակերպուած է դասախօսական երեկոյ մը: Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան պիտի խօսի Ս. Ծննդեան թուականներու տարբերութեանց մասին, որմէ ետք ներկաներուն առիթ պիտի տրուի հարցումներ ուղղելու:

Կը հրաւիրենք յատկապէս երիտասարդներն ու երիտասարդուհիները, որ ներկայ ըլլան այս շահեկան դասախօսութեան, լսեն Հայր Սուրբին փոխանցելիք տեղեկութիւնները եւ աւելի լաւ ձեւով ընկալեն Ս. Ծննդեան իմաստը:

HOLY MARTYRS ACYA LECTURE

On Wednesday, December 20, the Holy Martyrs Church youth association has organized a spiritual educational lecture to take place at 7:00 p.m. inside the church.

Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian will speak on the topic “The Dates of Christmas and the Armenian Church”.

